**Շրջակա միջավայրի նախարարության**
**Գլխավոր քարտուղար պարոն Գ.Գույանին**

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1. Քաղաքացիական ծառայողի/ծառայողների անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը**
Նարինե Հակոբյան (հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի տեղակալ):

**2. Գործուղման վայրը ժամկետները**
Շվեյցարիայի Համադաշնություն, քաղաք Ժնև, 2023 թվականի ապրիլի 24-25:

**3. Հրավիրող կողմը**
ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի(UNEP) քարտուղարություն

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**.

ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի օգտակար հանածոների և մետաղների կառավարման բնապահպանական ասպեկտների վերաբերյալ 5/12 բանաձևի իրականացման հարցերով տարածաշրջանային աշխատաժողովի մասնակցություն:

Միջկառավարական տարածաշրջանային խորհրդակցության նպատակն էր օգտակար հանածոների և մետաղների կառավարման բնապահպանական ասպեկտների համատեքստում գնահատել առկա գործողությունները, ինչպես նաև բացահայտել միջազգային ընդլայնված հնարավորությունները, նպաստել համագործակցությանը՝ նպատակ ունենալով մշակել խորհրդատվական բնույթի առաջարկներ(non prescriptive)՝ բարելավելու օգտակար հանածոների և մետաղների կառավարումը դրանց ողջ կյանքի ցիկլի ընթացքում՝ համահունչ 2030 թվականի Կայուն զարգացման օրակարգին:

**5. Քննարկված թեմաները**

Տնտեսության զարգացմանը զուգընթաց բնական ռեսուրսների օգտագործման ծավալների մեծացման հետ ահագնացող բնապահպանական խնդիրներ, հանարդյունաբերական թափոնների վնասակար ազդեցությունների մեղմում, բնապահպանական համընդհանուր մոնիթորինգ:

**6. Հանդիպումները, ելույթները.**

Աշխատաժողովին մասնակցում էին ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի օգտակար հանածոների և մետաղների կառավարման բնապահպանական ասպեկտների վերաբերյալ 5/12 բանաձևի իրականացման հարցերով քարտուղարության ներկայացուցիչներ, տարածաշրջանից ներկա էին Հայաստանի, Վրաստանի, Հյուսիսային Մակեդոնիայի և Մոլդովայի 5/12 բանաձևի իրականացման հարցերով ազգային համակարգողները: Ազգային համակարգողների կողմից ներկայացվեց երկրներում առկա հանքարդյունաբերության հետևանքով առաջացած բնապահպանական խնդիրները:

**7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Քննարկումների ընդացքում ձևավորվեց առաջարկ՝ ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի կողմից իրականացնել օգտակար հանածոների գլոբալ գնահատում, համակարգված կերպով ուսումնասիրել բոլոր գոյություն ունեցող միջազգային փաստաթղթերը, որոնք ազդեցություն ունեն օգտակար հանածոների կառավարման ձևի վրա, գնահատել դրանց արդյունավետությունը և ներուժը՝ բարձրացնելու օգտակար հանածոների դերը գլոբալ բնապահպանական նպատակներին նպաստելու գործում: Գնահատման արդյունքում կբացահայտվեն առկա բացերը և կմատնանշվեն գլոբալ, ազգային և տեղական մակարդակներում այդ բացերը շտկելու միջոցառումների հնարավոր տարբերակներ:

**8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Տարածաշրջանային խորհրդակցության արդյունքում ձևավորված առաջարկները կներկայացվեն գլոբալ միջկառավարական հանդիպմանը, որը տեղի կունենա 2023 թվականի սեպտեմբերի 7-8-ը, Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաքում:

Գործուղվող՝ Նարինե Հակոբյան

5/5/2023